ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

9.01.2020
344-21

ԱԱԾ տնօրենի պաշտոնակատար
պարոն Էդուարդ Մարտիրոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարտիրոսյան,

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Կառավարության՝ 2019 թվականի նոյեմբերի 14-ին նշել է՝ «Առանց կատակի, ես այդպիսի հանձնարարական տվել եմ՝ պարզել որոշ շրջանակների ու սատանայի համագործակցության ձևերն ու ուղիները։ Ծիծաղում եք, բայց, իրոք, եթե կա պնդում, պետք է դա պարզվի, ի վերջո ազգային անվտանգության խնդիր է»։

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

1. «Որոշ շրջանակներ»-ը հանձնարարականի մեջ հստակ նշվա՞ծ են, թե՞ ոչ։ Եթե այո, ապա խնդրում ենք նշել՝ որոնք են այդ շրջանակները։
2. Ի՞նչ փուլում է հանձնարարականի կատարումը։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում։

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան